




ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի ասպիրանտ

 <https://orcid.org/0000-0001-7413-0455>

## ՄՆՆԵՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանի  
համակարգչային և տեղեկատվական գիտության մագիստրոս

 <https://orcid.org/0000-0001-6864-592X>

# ՆԵՐՔԻՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

Հոդվածում քննարկվում են ՀՀ Կառավարության 2021–2026 թթ. ծրագրով սահմանված ՀՀ տնտեսական բարդության բարձրացման ուղենիշներն առնչվող հարցեր՝ կապված ՀՀ-ում սահմանային տեխնոլոգիաների ներդրման ֆինանսավորման արտաքին և ներքին աղբյուրների հետ, նկատի ունենալով, որ երկրի տնտեսական բարդության աստիճանը պայմանավորած է համաշխարհային տեխնոլոգիական սահմանից նրա հեռավորությունից: Սահմանային տեխնոլոգիաների ներդրման համար անհրաժեշտ արտադրողական գիտելիքների փոխանցման կապուղիներից մեկն օտարերկրյա ուղղակի ներդրումներն (ՕՈՒՆ) են, որոնց ներհոսքի մակարդակը բավարար չէ, իսկ վերջին տասնամյակի միտումների և COVID-19-ի ազդեցությամբ ավելի են մեծացել ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված անորոշությունները: Եզրակացվել է, որ տեխնոլոգիական առաջընթացի վրա հիմնված կայուն ու տնտեսական աճի համար անհրաժեշտ ներդրումների կայուն և բարձր մակարդակը պետք է ապահովել ներքին խնայողություններով: Առաջարկվել է տնտեսական բարդության աստիճանի բարձրացմանը միտված արտահանման հարթակի ՕՈՒՆ-ի և ներքին ներդրումների հայեցակարգային շրջանակ:

**Հիմնաբառեր.** *համախառն խնայողություններ, համախառն ներքին խնայողություններ, հիմնական կապիտալի կուրակում, տնտեսական բարդություն, սահմանային տեխնոլոգիաներ, արտահանման հարթակի ՕՈՒՆ և ներքին ներդրումներ*

JEL: E21, E22

DOI: 10.52174/1829-0280\_2022.1-9

**Ներածություն:** ՀՀ Կառավարության 2021–2026 թթ. ծրագրում (այսուհետև՝ Ծրագիր) նշված է. «Հայաստանի տնտեսական բարդության բարձրացման նպատակով նախատեսվում է համալիր միջոցառումների իրականացում՝ միտված ձեռնարկությունների տեխնոլոգիական վերազինմանը, ինչպես նաև միջազգային նոր շուկաներ ներթափանցմանն ու առկա դիրքերի ամրապնդմանը»<sup>1</sup>: Նախատեսվել է տնտեսական բարդության համաթիվը (ՏԲՀ) 2018 թ. –0.39-ից հասցնել 0.1-ի և 10 տարվա ընթացքում դասվել բարձր տնտեսական բարդություն ունեցող երկրների շարքին: Թեպետ այս նպատակադրման իրատեսականությունը, որոշ առումներով, խնդրահարույց է, այնուամենայնիվ, տնտեսական կայուն և տևական աճի, ընդհանուր առմամբ, տնտեսական զարգացման խնդիրը լուծելու ճանապարհի տեսանկյունից, թիրախավորումը հիմնավորված է: Առնվազն երեք կարևոր խնդիր պետք է լուծել սահմանված ուղենիշներին հասնելու համար. (1) առկա կամ պոտենցիալ ոլորտներում բարձրացնել արտադրանքի բարդության աստիճանը, (2) տեխնոլոգիաների միջազգային փոխանցման գործընթացներում երկրի ներգրավվածության ապահովումը ընտրված ոլորտներում ՕՈՒՆ-ի խթանմամբ, (3) ներքին խնայողությունների մակարդակի բարձրացումը:

**Գրականության ակնարկ:** «Հետազոտություններ ազգերի հարստության բնույթի և պատճառների մասին» աշխատության մեջ Ա.Սմիթը<sup>2</sup> նշել է, որ աշխատանքի բաժանմամբ բարձրանում է տնտեսական արդյունավետությունը, զարգանում են տնտեսական միավորների, աշխատողների հմտությունները, քանի որ նրանք մասնագիտանում են մեկ գործողության մեջ:

Արտադրանքի մեծ մասը պահանջում է ավելի շատ գիտելիքներ, քան կարող է յուրացնել մարդը: Միաժամանակ, գիտելիքների յուրացումը բարդանում է նրանով, որ դրանք լինում են բացահայտ և ոչ բացահայտ («համր»): Պրոֆեսոր Գ. Վարդանյանի դիտարկմամբ՝ «Բացահայտ գիտելիքները ծածկագրվող են ու մատչելի...: Համր գիտելիքները... դժվար է հստակ արտահայտել գրավոր կամ բանավոր ձևով, դրանք ձեռք են բերվում անձնական փորձով»<sup>3</sup>:

Ակնհայտորեն, եթե բոլոր գիտելիքները լինեին բացահայտ, ապա երկրները շատ արագ կհասնեին սահմանային տեխնոլոգիաներին (frontier technology)<sup>4</sup>, չէին լինի զարգացման մակարդակների և եկամտի այնպիսի

<sup>1</sup> ՀՀ Կառավարության 2021-2026 թվականների ծրագիր, էջ 29:

<sup>2</sup> Տե՛ս **Smith A.**, An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, London, 1776, էջ 9, [https://books.google.am/books?id=C5dNAAAACAAJ&pg=PP7&redir\\_esc=y#v=onepage&q&f=false](https://books.google.am/books?id=C5dNAAAACAAJ&pg=PP7&redir_esc=y#v=onepage&q&f=false)

<sup>3</sup> **Վարդանյան Գ.**, Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ, Եր., «Գիտություն», 2008, էջ 46:

<sup>4</sup> Ներկայում սահմանային տեխնոլոգիաներ են համարվում արհեստական բանականությունը (Artificial intelligence-AI), իրերի համացանցը (Internet of Things-IoT), մեծ տվյալները (Big data), բլոկչեյնը (Blockchain), եռաչափ տպագրությունը (3D printing), ռոբոտաշինությունը (Robotics),

տարբերություններ, ինչպիսին այսօր են, իսկ համաշխարհային առևտրի կառուցվածքն էականորեն կտարբերվեր ներկայիս կառուցվածքից: Տնտեսական բարդության աստիճանի վերաբերյալ պատկերացում կազմելու նկատառումով անդրադարձ է կատարվել մի արժեքավոր աշխատության, որում ընդհանրացված են երևույթի տարբեր կողմերին առնչվող նախորդ հիմնական հետազոտությունների արդյունքները:

Ռիկարդո Հաուսմանը և ուրիշներ տնտեսության բարդությունը մեկնաբանում են հետևյալ կերպ. «...տնտեսության բարդությունը նրանում պարունակվող արտադրողական գիտելիքների քանակի արտացոլումն է: Այդ գիտելիքների ստացումը և փոխանցումը թանկ է արժենում, դրանք տրոհված են մասերի, որոնք մենք անվանում ենք կարողություններ: Կարողությունները դժվար է կուտակել, որովհետև այդ ժամանակ առաջանում է հավի և ձվի բարդ հիմնախնդիրը: Մի կողմից՝ երկրները չեն կարող ստեղծել արտադրանք, որը պահանջում է կարողություններ, որոնք նրանք չունեն: Մյուս կողմից՝ քիչ են կարողություններ կուտակելու խթաններն այնտեղ, որտեղ գոյություն չունեն ոլորտներ, որոնք դրանց կարիքն ունեն: Դա հատկապես ճշմարիտ է, երբ պոտենցիալ նոր ոլորտի համար պահանջվող, սակայն, պակասող կարողությունները շատ են: Այդ դեպքում որևէ մեկ պակասող կարողության տրամադրումը կլինի ոչ բավարար՝ նոր ոլորտը գործարկելու համար»<sup>5</sup>:

Տնտեսական բարդության աստիճանի այս մեկնաբանությունը որոշ ճշգրտման կարիք ունի: Ակնհայտ է, որ արտադրողական գիտելիքի առկայությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է նորարարությունների արդյունք հանդիսացող բարդ արտադրանք թողարկելու համար: Դրա համար կպահանջվեն կապիտալի նոր համակցություններ և նոր խմբավորումներ՝ հիմնված արտադրողական գիտելիքների արդյունավետ կիրառման վրա: Այդ առումով, Դեյվիդ Հարփերը և Էնտոնի Էնդրեսը նշում են. «Կապիտալի նոր համակցությունները և վերախմբավորումները պարունակում են որևէ նորարարություն և հանգեցնում ավելի վաղ գոյություն ունեցող ինչ-որ կարողության յուրացմանը: Իսկապես, ձեռնարկատեր-արտադրողների և ստեղծագործ օգտագործողների կողմից կապիտալի համակցությունների համատեղ վերադասավորումը նորարարությունների հիմնական աղբյուրն է շուկայական տնտեսությունում»<sup>6</sup>:

Հիմնվելով նշվածի վրա՝ ուսումնասիրվող երևույթի մեկ այլ մեկնաբանություն կարող է լինել հետևյալը. տնտեսության բարդությունը դրանում պարունակվող արտադրողական գիտելիքների քանակի արտացոլումն է և դրանց արդյունավետ կիրառությունը՝ կապիտալի նոր համակցությունների ու վերախմբավորումների միջոցով նորարարությունների իրականացումը, այդ հենքով՝ բարդ արտադրանքի թողարկումը:

դրոնները (Drones), գենային խմբագրումը (Gene editing), նանոտեխնոլոգիաները (Nanotechnology), արևային ֆոտովոլտային տեխնոլոգիաները (Solar photovoltaic, Solar PV): St'u Technology and Innovation, Report 2021. New York, United Nations, 2021, էջ 17:

<sup>5</sup> Hausmann R., Hidalgo C., Bustos S., Coscia M., Simoes A., Yildirim M., The Atlas of Economic Complexity. Massachusetts Institute of Technology and Center for International Development, Harvard University, 2013, p. 18.

<sup>6</sup> Harper D., Endres A., Innovation, Recombinant Capital and Public Policy. University of Chicago. Supreme Court Economic Review, Vol. 23, 2015, էջ 217:

Տնտեսական բարդությամբ չափվում է, թե առաքման համաշխարհային շրթաներում որքան խճճված է փոխգործակցությունների ցանցը: Տնտեսական բարդությունն արտահատված է երկրի արտադրանքի կազմում և արտացոլում է այն կառույցները, որոնք առաջանում են գիտելիքները պահելու և համակցելու համար:

Ինչպես ՀՀ, այնպես էլ զարգացող մյուս երկրների տնտեսական աճի և զարգացման տեսանկյունից կարևորվում է աշխատանքի միջազգային բաժանմանն այնպիսի մասնակցության հասնելը, որը կերաշխավորի արտադրողական և ինստիտուցիոնալ գիտելիքների փոխանցումը զարգացած երկրներից, դրանց օգտագործումը տնտեսության ավելի ու ավելի բարդացող ոլորտներում, ինչը ենթադրում է տնտեսական բարդության աստիճանի բարձրացում, տեխնոլոգիական ընթացիկ սահմանից երկրի հեռավորության կրճատում:

Հայտնի կապուղիներից են ՕՈՒՆ-ը: Բացի բուն կապիտալից, ՕՈՒՆ-ը կարող են նպաստել արտասահմանյան արտադրական տեխնոլոգիաներին, արտասահմանյան շուկաներին և առաքման միջազգային շրթաններին ծանոթանալուն: Այդ փորձառությունը կարող է արժենալ ավելին, քան բուն կապիտալը: Զարգացող մյուս երկրներում ՕՈՒՆ-ը ներդրումների ընդհանուր ծավալի փոքր մասն են կազմում, սակայն գիտելիքների փոխանցման շնորհիվ դրանց նշանակությունը շատ ավելին է, քան մասնակի ներդրանքը ներդրումների ընդհանուր ծավալում<sup>7</sup>:

Փիթեր Հավիթը և Դեյվիդ Մայեր-Ֆոլկեսը<sup>8</sup>, դիտարկելով տեխնոլոգիական փոփոխությունների հիմնական առանձնահատկությունները, տարբերակում են տեխնոլոգիական ներդրումների երկու տեսակ, որոնք համապատասխանում են համաշխարհային տեխնոլոգիական սահման դուրս գալու երկու տարբեր ռազմավարությունների՝ «ժամանակակից հետազոտություններ և մշակումներ (R&D)» և «ներդրում»: Այդ երկուսը միասին տեղի են ունենում զարգացած երկրներում, մինչդեռ միայն ներդրումը, որն իրենից ներկայացնում է յուրացում և հարմարեցում, կարող է տեղի ունենալ պակաս զարգացած երկրներում: Երկուսն էլ, հիմնված լինելով համաշխարհային ընթացիկ տեխնոլոգիական սահմանի վրա, պահանջում են մեծ ծախսեր: Ավելին, առաջինը պահանջում է հմտությունների ավելի բարձր մակարդակ, քան երկրորդը: Առաջինը հիմնված է գիտական գիտելիքների, դրանց հաստատությունների վրա և առաջավոր տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց միտված է գերազանցելու տեխնոլոգիայի ներդրման համար անհրաժեշտ համարվող գիտելիքների շեմային մակարդակը:

Երկրորդը՝ տեխնոլոգիաների ներդրումները, պահանջում են համապատասխան հմտություններ, ինչի համար երկիրը պետք է ունենա այդ հմտությունները ձեռք բերելու կարողություն, զարգացման համապատասխան մակարդակ: Քիչ արդյունավետ է համարվում ուսուցմանը կամ վերապատրաստմանը ժամանակ հատկացնելը, քանի որ ուսուցումը տեղի է ունենում տեխնոլոգիաներին համեմատաբար անձանոթ դասավանդողների ոչ բարձր

<sup>7</sup> St' u Commission on Growth and Development. The Growth Report : Strategies for Sustained Growth and Inclusive Development. Washington, DC : World Bank, 2008, էջ 42:

<sup>8</sup> St' u **Howitt P., Mayer-Foulkes D.**, R&D, Implementation, and Stagnation: A Schumpeterian Theory of Convergence Clubs// urnal of Money, Credit and Banking, Vol. 37, No. 1, Feb., 2005, էջ 147-177:

կարողությունների, արդիական լաբորատորիաների բացակայության միջավայրում: Խնդիրը աշխատողներին այնպիսի արտադրողական գիտելիքների տրամադրումն է, որոնք կհամապատասխանեն ընթացիկ տեխնոլոգիական սահմանին: Հայաստանում, թերևս, որոշակի առաջընթաց տեղի է ունեցել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, որն անհրաժեշտ, բայց ոչ բավարար է երկրի տնտեսական բարդության աստիճանը բարձրացնելու տեսանկյունից: Դրա ապացույցը նախորդ երեք տասնամյակում ՀՀ-ում տեխնոլոգիական ներդրումների ցածր արդյունավետությունն է, որի սինթետիկ գնահատականը երկրի հեռավորությունն է տեխնոլոգիական սահմանից և տնտեսական բարդության ցածր աստիճանը:

Գոյություն ունեն լուրջ խոչընդոտներ առաջավոր տեխնոլոգիաների ներդրման ճանապարհին, որոնք պայմանավորում են, ըստ արտադրողականության, երկրների միջև նշանակալի տարբերությունները: Ուսումնասիրելով այդ խոչընդոտների բնույթը՝ Հարվարդի և Բրաունովյան համալսարանների հետազոտողներ Ֆիլիպ Ագիլենը, Փիթեր Հավիթը, Դիեգո Քամինը և Իգարբել Տեկուն<sup>9</sup> մշակել են մոդել, որում տեխնոլոգիաների միջազգային տարածման առավելության օգտագործման երկրի կարողությունը դրական կոռելացված է նրա խնայողությունների մակարդակի հետ: Սահմանային տեխնոլոգիաներին քաջատեղյակությունը նվազեցնում է դրանց ներդրման ծախսերը: Ուստի առաջավոր տնտեսություններում խնդիրներ չեն առաջանում դրանք ներդնելիս: Առանց առաջավոր երկրների աջակցության՝ տեխնոլոգիական սահմանից հեռու երկրների համար սահմանային տեխնոլոգիաների ներդրումը բավական թանկ կարժենա: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, այդ խնդրի լուծումը տեղական ձեռնարկատերերի և սահմանային տեխնոլոգիաներին տիրապետող օտարերկրյա ներդրողների համագործակցությունն է: Նկարագրված մոդելի արժանիքն այն է, որ սահմանային տեխնոլոգիայից հեռու գտնվող երկրների խմբի համար նախորդ 10 տարիների ընթացքում խնայողությունների մակարդակի 10%-ով բարձրացումը կհանգեցնի հաջորդ 10 տարիներին 1.3%-ային կետով տնտեսական աճի միջին տեմպի բարձրացմանը, այսինքն՝ կայուն և տևական տնտեսական աճի ապահովմանը:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Հետազոտության ընթացքում օգտագործվել են ընդհանուր գիտական (տեսական և փորձառական), մասնավորապես՝ համեմատությունների, ժամանակային շարքերի վերլուծության մեթոդները՝ երևույթի միտումների և օրինաչափությունների բացահայտման նպատակով: Տնտեսության բարդության աստիճանի ուսումնասիրության համար օգտագործվել է Հարվարդի համալսարանի Աճի լաբորատորիայի մշակած տնտեսության բարդության համաթիվը (Economic Complexity Index-ECI), որը հնարավորություն է ընձեռում գնահատելու արտադրողական գիտելիքների ընթացիկ վիճակը երկրում: The Atlas of Economic Complexity գործիքն օգտագործվում է տնտեսական դինամիկական և յուրաքանչյուր երկրի համար նոր հնարավորությունները գնահատելու նպատակով: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են 1994–2020 թթ. ժամանակահատվածի ՀՀ հա-

<sup>9</sup> Տե՛ս **Aghion Ph., Comin D. and Howitt P.**, When does domestic saving matter for economic growth? Working paper, Department of Economics, Harvard University, 2006, 44 էջ (+8), <http://nrs.harvard.edu/urn-3:HUL.InstRepos:27759050>

մախառն խնայողությունների, արտահանման տվյալների ժամանակային շարքերը, ինչպես նաև տնտեսության բարդության համաթվի 2000–2019 թթ. տվյալները: Վերջիններս հնարավորություն են ընձեռում բացահայտելու երկրների արտադրական հնարավորություններն արտահանման զամբյուղների հիման վրա<sup>10</sup>: Ըստ տնտեսական բարդության համաթվի՝ երկրների աստիճանակարգումն իրականացնում է Հարվարդի համալսարանի Աճի լաբորատորիան:

Կատարվել են նաև միջազգային համեմատություններ, ուսումնասիրվել է ՀՀ տնտեսության բարդության համաթվի շարժընթացը: Համաթվի բարելավման հնարավորությունը դիտարկվել է համաշխարհային տեխնոլոգիական սահմանից երկրի հեռավորության կրճատման համատեքստում, ինչի համար անդրադարձ է արվել դրա համար անհրաժեշտ ներքին ներդրումներին և ՕՈՒՆ-ին: Համախառն խնայողությունների և հիմնական կուտակման միջև տևական ժամանակ գոյություն ունեցող ռեսուրսային ճեղքվածքն ուսումնասիրվել է ուղղակի ներդրումների համաշխարհային հոսքերի ձևավորված՝ ՀՀ-ի համար ոչ նպաստավոր միտումների շրջանակում: Կատարված վերլուծությունների հիման վրա առաջարկվել է տնտեսության բարդության աստիճանի բարձրացման հայեցակարգ:

**Վերլուծություն:** ՀՀ տնտեսական բարդության աստիճանի բարձրացման ռազմավարության մշակման առումով կարևորվում է ՀՀ միջազգային դիրքի ուսումնասիրությունը: Աղյուսակ 1-ից երևում է, որ ՀՀ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող արտադրանքը համադրելի չէ ՏԲՀ բարձր ցուցանիշով երկրների արտահանման կառուցվածքի հետ, որը համաշխարհային տեխնոլոգիական սահմանին կամ դրան մոտ գտնվելու արտացոլումն է:

Աղյուսակ 1

**Ըստ ՏԲՀ աստիճանակարգի (ԱԿ) վերին 5 երկրների և Հայաստանի համաթվերը (2019 թ.)**

ԱԿ	Երկիր	ՏԲՀ	Արդահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող արդարդանք
1	Ճապոնիա	2.49	Ավտոմեքենաներ, ՏՀՏ (տեխնոլոգիաներ)
2	Շվեյցարիա	2.13	ՏՀՏ, ոսկի, փաթեթավորված դեղամիջոցներ
3	Գերմանիա	2.07	Ինտեգրալ սխեմաներ, ՏՀՏ, ավտոմեքենաներ
4	Հրվ. Կորեա	2.05	ՏՀՏ, ավտոմեքենաներ
5	Սինգապուր	2.00	ՏՀՏ, ավտոմեքենաներ
76	Հայաստան	-0.27	Մոլիբդենի և պղնձի հանքաքարեր և խտանյութեր, ոսկի, սիգարներ և ծխախոտ, ռգելից խմիչքներ

Աղբյուր՝ Country & Product Complexity Rankings. <https://atlas.cid.harvard.edu/rankings>; <https://www.worldstopexports.com/armenias-top-10-exports/>

Տնտեսական բարդության աստիճանն արտացոլվում է երկրի արտահանման կառուցվածքում բարդության բարձր աստիճանի արտադրանքի տեսակարար կշռով: Աստիճանակարգի վերին հինգ երկրների և Հայաստանի արտահանման մեջ մեծ ծավալ ունեցող արտադրանքը հետևյալն է. Ճապոնիա՝ ավտոմեքենաներ, ՏՀՏ (տեխնոլոգիաներ), Շվեյցարիա՝ ՏՀՏ, ոսկի, փաթեթավորված դեղամիջոցներ, Գերմանիա՝ ինտեգրալ սխեմաներ, ՏՀՏ,

<sup>10</sup> St’u Mealy P., Farmer D., Teytelboym A., Interpreting economic complexity//Science Advances, Vol. 5, Issue 1, eaau1705, 4 Jan 2019, էջ 1-8:

ավտոմեքենաներ, Հարավային Կորեա՝ ՏՀՏ, ավտոմեքենաներ, Սինգապուր՝ ՏՀՏ, ավտոմեքենաներ, Հայաստան՝ մոլիբդենի և պղնձի հանքաքարեր և խտանյութեր, ոսկի, սիգարներ և ծխախոտ, ոգելից խմիչքներ (աղյուսակ 1)<sup>11</sup>:

Աղյուսակ 2

**Երկրների աստիճանակարգն ըստ տնտեսական բարդության համաթվի**


Rank	Country	2019	Rank	Country	2019	Rank	Country	2019	Rank	Country	2019
1	Japan	2.49	35	Bosnia and Herzegovina	0.73	69	Dominican Republic	-0.18	103	Ghana	-0.85
2	Switzerland	2.13	36	Canada	0.69	70	Mauritius	-0.19	104	Nicaragua	-0.88
3	Germany	2.07	37	Latvia	0.67	71	Chile	-0.21	105	Bangladesh	-0.88
4	South Korea	2.05	38	Portugal	0.63	72	Namibia	-0.22	106	Uganda	-0.89
5	Singapore	2.00	39	Saudi Arabia	0.62	73	Argentina	-0.24	107	Zimbabwe	-0.91
6	Czechia	1.80	40	Turkey	0.61	74	Jamaica	-0.24	108	Ethiopia	-0.92
7	Austria	1.77	41	Norway	0.56	75	Sri Lanka	-0.25	109	Burkina Faso	-0.93
8	Sweden	1.75	42	Bulgaria	0.53	76	Armenia	-0.27	110	Malawi	-0.94
9	Slovenia	1.64	43	India	0.46	77	Kenya	-0.30	111	Madagascar	-0.95
10	Hungary	1.63	44	Costa Rica	0.38	78	Kazakhstan	-0.32	112	Togo	-0.95
11	United States	1.57	45	Tunisia	0.36	79	Guatemala	-0.32	113	Mongoli	-0.96
12	UK	1.55	46	Cyprus	0.32	80	Iran	-0.35	114	Myanmar	-1.00
13	Finland	1.48	47	Ukraine	0.30	81	Qatar	-0.42	115	Tanzania	-1.00
14	Slovakia	1.45	48	Panama	0.24	82	UAE	-0.44	116	Algeria	-1.03
15	Italy	1.37	49	New Zealand	0.23	83	Albania	-0.44	117	Ecuador	-1.11
16	China	1.35	50	Greece	0.13	84	Oman	-0.44	118	Cote d'Ivoire	-1.11
17	Ireland	1.33	51	Trinidad & Tobago	0.13	85	Paraguay	-0.45	119	Yemen	-1.13
18	Mexico	1.31	52	Russia	0.12	86	Australia	-0.45	120	Azerbaijan	-1.11
19	France	1.31	53	Brazil	0.10	87	Uzbekistan	-0.48	121	Libya	-1.24
20	Israel	1.26	54	El Salvador	0.09	88	Cambodia	-0.50	122	Mozambique	-1.25
21	Belgium	1.21	55	Colombia	0.09	89	Morocco	-0.52	123	DR of the Congo	-1.34
22	Romania	1.20	56	Vietnam	0.05	90	Honduras	-0.57	124	Mauritania	-1.37
23	Thailand	1.15	57	Lebanon	0.04	91	Mali	-0.60	125	Republic of the Congo	-1.38
24	Malaysia	1.12	58	North Macedonia	0.04	92	Laos	-0.65	126	Gabon	-1.44
25	Netherlands	1.11	59	Bahrain	0.04	93	Pakistan	-0.66	127	Angola	-1.49
26	Denmark	1.10	60	South Africa	0.03	94	Cuba	-0.69	128	Venezuela	-1.49
27	Poland	1.08	61	Indonesia	0.02	95	Turkmenistan	-0.70	129	Cameroon	-1.53
28	Philippines	0.95	62	Uruguay	0.01	96	Zambia	-0.72	130	Papua New Guinea	-1.57
29	Estonia	0.92	63	Georgia	-0.01	97	Tajikistan	-0.74	131	Liberia	-1.70
30	Croatia	0.87	64	Eswatini	-0.03	98	Kuwait	-0.77	132	Guinea	-1.75
31	Belarus	0.83	65	Jordan	-0.04	99	Botswana	-0.79	133	Nigeria	-1.77
32	Spain	0.81	66	Kyrgyzstan	-0.04	100	Peru	-0.80			
33	Lithuania	0.79	67	Egypt	-0.15	101	Senegal	-0.80			
34	Serbia	0.75	68	Moldova	-0.16	102	Bolivia	-0.83			

Աղբյուր՝ <https://atlas.cid.harvard.edu/rankings>

<sup>11</sup> Աղբյուր՝ <https://www.worldstopexports.com/armenias-top-10-exports/>

Աղյուսակ 2-ում 133 երկրների աստիճանակարգն է՝ ըստ տնտեսական բարդության համաթվի: Country & Product Complexity Rankings-ում համաթվերը ներկայացված են ըստ «պակաս բարդ երկիր» («most complex country») – «առավել բարդ երկիր» («least complex country») սանդղակի (գծապատկեր 1)<sup>12</sup>:

2019 թ. աստիճանակարգում «առավել բարդ երկիր» խմբի (գծապատկեր 1-ում մուգ կապույտ հատված) ստորին հորիզոնականում Բելգիան է՝ 1.21 համաթվով: Այդ խմբին նախորդող խմբի (երկնագույն հատված), որը պայմանական կարելի է անվանել «չափավոր բարդ երկիր», ստորին՝ 43-րդ հորիզոնականում Հնդկաստանն է՝ 0.46 համաթվով: 0.1 համաթիվ ունեցող Բրազիլիան զբաղեցնում է 53-րդ հորիզոնականը:



Գծապատկեր 1. Երկրների տնտեսական բարդության աստիճանակարգումը<sup>13</sup>

Գծապատկեր 1-ից երևում է, որ ՀՀ-ն պատրաստվածության  $-0.27$  համաթվով (0-1 սանդղակ) 158 երկրների շարքում 2019 թ. զբաղեցրել է 76-րդ հորիզոնականը (ցածր-միջին խումբ), հետևաբար՝ տեխնոլոգիական սահմանից նշանակալի հեռու է: Հարկ է նկատել, որ գրեթե նույն մեթոդաբանությամբ տնտեսական բարդության աստիճանի գնահատման համար ՏՀԶԿ մշակված համաթվով Հայաստանը 2019 թ.  $-0.31$  համաթվով զբաղեցրել 88-րդ հորիզոնականը 146 երկրների շարքում<sup>14</sup>:


Ենթադրաբար՝ ՀՀ Կառավարության ծրագրում սահմանված նպատակը<sup>15</sup> վերաբերել է «չափավոր բարդ երկիր» («բարձր տնտեսական բարդություն»), այլ ոչ՝ «առավել բարդ երկիր» խմբին դասվելուն: Հետևաբար՝ այդ նպատակին հասնելու համար 0.1 համաթվի փոխարեն առնվազն պետք է հասնել 0.5 համաթվին, ինչն իրատեսական կարող է համարվել համապատասխան մեխանիզմ գործադրելու դեպքում: 2000 թ. ՀՀ դիրքն այս աստիճանակարգում (35-րդ հորիզոնական, որը 2019 թ. զբաղեցրել է Բոսնիան և

<sup>12</sup> St'u Country & Product Complexity Rankings. <https://atlas.cid.harvard.edu/rankings>  
<sup>13</sup> Ձևափոխությունները կատարել են հեղինակները: Աղբյուր՝ <https://atlas.cid.harvard.edu/rankings>  
<sup>14</sup> Աղբյուր՝ <https://oec.world/en/rankings/eci/hs6/hs96>  
<sup>15</sup> ՀՀ Կառավարության 2021–2026 թթ. ծրագիր, էջ 29-30:



Հերցեգովինան 0.73 համաթվով), հավանաբար, պայմանավորված է եղել արտահանման տվյալների ոչ ճիշտ ընկալմամբ: Մինչև 2000-ական թվականների սկիզբը ՀՀ-ից զանգվածաբար արտահանվել են ոչ միայն տեղական, այլև արտասահմանյան արտադրության մեքենասարքավորումներ: Այսպես օրինակ՝ ըստ Standard International Trade Classification-ի (SITC)<sup>16</sup>, միայն երկու (ՀՎՏ-ում<sup>17</sup> «Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ, մեխանիկական հարմարանքներ և դրանց մասեր» և «Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ծայնագրող ապարատներ և դրանց մասեր»)<sup>18</sup> ապրանքային խմբերի արտահանման ընդհանուր ծավալի (որպես արտահանման ընդհանուր ծավալի մասնաբաժին) շարժընթացը ներկայացված է գծապատկեր 2-ում: Ապրանքային այս խմբերը երկրի տնտեսական բարդության աստիճանը պայմանավորող գլխավոր խմբերից են<sup>19</sup>:

Ըստ գծապատկեր 2-ի՝ երկրի տնտեսական բարդության աստիճանի բարձրացմանը նպաստել են մեքենասարքավորումների արտահանման ծավալների աճի բարձր տեմպերը: Մինչդեռ, այդ արտադրանքը հիմնականում մասնավորեցված կամ պետական ձեռնարկությունների անգործության մատնված սարքավորումներն են եղել, իսկ դրանց ծագման երկիրը, հավանաբար՝ ոչ Հայաստանը:



**Գծապատկեր 2.** «Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ, մեխանիկական հարմարանքներ և դրանց մասեր» և «Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ծայնագրող ապարատներ և դրանց մասեր» ապրանքային խմբերի արտահանման մասնաբաժինը (%) ՀՀ ընդհանուր արտահանման ծավալում<sup>20</sup>

Հատկապես մեծ քանակի բարձր արտադրողական մեքենասարքավորումներ ներմուծվեցին ՀՀ՝ 1988 թ. երկրաշարժից հետո, այսինքն՝ դրանք հիմնականում ընթացիկ՝ 4-րդ տեխնոլոգիական կացութաձևի («կոնդրատյան ալիքների տեսանկյունից») տեխնոլոգիաներն էին: Անկախության առաջին տասնամյակում Հայաստանը, ըստ էության, կորցրեց իր մեքենաշինական

<sup>16</sup> Տե՛ս Standard International Trade Classification, Revision 4. United Nations, 2006, էջ 113, 139:

<sup>17</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք:

<sup>18</sup> Համապատասխանում է SITC 2006-ի հետևյալ խմբերին. Division 71-Power-generating machinery and equipment; Division 77 – Electrical machinery, apparatus and appliances, n.e.s., and electrical parts thereof (including non-electrical counterparts, n.e.s., of electrical householdtype equipment.

<sup>19</sup> Տե՛ս **Hidalgo C., Hausmann R.**, The building blocks of economic complexity//PNAS , June 30, 2009, vol. 106, no. 26, <https://www.pnas.org/content/pnas/106/26/10570.full.pdf>

<sup>20</sup> Աղբյուր՝ ՀՎՏ - 1995, 1996, էջ 183, ՀՎՏ - 2005, էջ 484-485, ՀՎՏ - 2021, էջ 527-528:

համալիրը, որի որոշ միավորներ, ձեռնարկություններ, այն ժամանակվա սահմանային տեխնոլոգիաներին մոտ էին: Այն, ինչ սահմանվել է Կառավարության ծրագրով (միջնաժամկետում հասնել 0.1 համաթվին)<sup>21</sup>, չի հաջողվել անել երեք տասնամյակի ընթացքում. բաց է թողնվել սահմանային տեխնոլոգիաներին մոտենալու տեխնոլոգիական հնարավորությունների պատուհանը դեռևս 1990-ականներին՝ պայմանավորված ներքին խնայողությունների դերի անտեսմամբ և ՕՈՒՆ-ի նկատմամբ ընտրանքային մոտեցման բացակայությամբ: Սակայն նախ կարևոր է պարզել, թե բարձր աստիճանակարգ ունեցող երկրներն ինչով են տարբերում մյուսներից: Բարձր վարկանիշով երկրները, սովորաբար, օժտված են հետևյալ հատկանիշներով. (1) արտահանվող արտադրանքի բազմատեսակություն, (2) բարդ և եզակի արտահանվող արտադրանք (այսինքն՝ մի քանի երկիր է այդպիսի արտադրանք թողարկում)<sup>22</sup>: Փաստորեն, երկրի տնտեսական բարդության վարկանիշը կախված է «արտադրողական գիտելիքից»: Արտադրողական գիտելիքի «անհրաժեշտ տարրերին» սովորաբար տիրապետում են ուսումնառության, փորձառության միջոցով: Հետևաբար՝ խնդրի լուծումը հանգում է արտադրողական գիտելիքներին և հմտություններին տիրապետող կադրեր պատրաստելուն, ավելին, տեխնոլոգիայի կլանման՝ երկրի կարողությունը զարգացնելուն: Բայց այդ ճանապարհին զարգացող և անցումային տնտեսությամբ երկրները, որոնք գտնվում են համաշխարհային տեխնոլոգիական սահմանից հեռու, հանդիպում են դժվարիադթահարելի խոչընդոտի՝ ներքին ներդրումների սակավությանը:

Համաշխարհային բանկի աճի և զարգացման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), The Growth Report-ում ընդհանրացնելով «տնտեսական հրաշքների» 13 օրինակների (որոնց աճը կազմել է տարեկան, միջին հաշվով, 7%՝ 25 կամ ավելի տարիներ շարունակ) փորձը<sup>23</sup>, եզրակացրել է, որ ուժեղ, հարատև աճը պահանջում է ներդրումների բարձր մակարդակ, ՀՆԱ առնվազն 25%-ը՝ հաշվի առած ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ներդրումները: Ռեսուրսները ներդնելու, այլ ոչ թե սպառելու դեպքում տնտեսությունները փոխզիջում են անում ներկա և ապագա կենսամակարդակների միջև: Ինչպես աճն է կախված ներդրումներից, այնպես էլ ներդրումները կախված են դրանք ֆինանսավորելու երկրի կարողությունից՝ ի հաշիվ ներքին խնայողությունների կամ օտարերկրյա աղբյուրների: Մինչդեռ, արտասահմանյան փոխառությունները կապված են ռիսկի հետ: Հանձնաժողովը նշում է, որ «չկա կայուն բարձր ներդրումային ուղու որևէ դեպք, որն ապահովված չի եղել ներքին բարձր խնայողություններով»<sup>24</sup>: Զեկույցում ասվում է, որ զարգացող երկրներում թեպետ ՕՈՒՆ-ը ներդրումների ընդհանուր ծավալում կազմում են ոչ մեծ մասնաբաժին, այնուամենայնիվ, դրանց կարևորությունն ավելի մեծ է մասնաբաժնային ներդրումից. դրանց միջոցով փոխանց-

<sup>21</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 2021–2026 թթ. ծրագիրը, էջ 29:


<sup>22</sup> Տե՛ս These are the most complex economies around the globe, <https://www.weforum.org/agenda/2019/12/countries-ranked-by-their-economic-complexity/>

<sup>23</sup> Բոթսվանա, Բրազիլիա, Չինաստան, Հոնկոնգ, Ինդոնեզիա, Ճապոնիա, Կորեայի Հանրապետություն, Մալայզիա, Մալթա, Օման, Սինգապուր, Թայվան, Թաիլանդ:

<sup>24</sup> Commission on Growth and Development. The Growth Report: Strategies for Sustained Growth and Inclusive Development. Washington, DC : World Bank, 2008, pp. 34, 54.

վում են արտադրական և ինստիտուցիոնալ գիտելիքներ: Մի շարք երկրներ, որոնց թվում Արգենտինան, Բրազիլիան, Հնդկաստանը, Նիգերիան և Մեքսիկան են, թեպետ տևական ժամանակ ունեցել են կայուն տնտեսական աճ, այնուամենայնիվ, հետագայում չեն կարողացել հասնել լիարժեք զարգացման կարգավիճակի: Ըստ Փիթեր Հավիթի և Դեյվիդ Մայեր-Ֆոլկեսի՝ «այդ տարբեր երևույթները կարող են լինել տեխնոլոգիական հնարավորությունների պատուհանների արդյունք, որոնք բացվում և փակվում են տարբեր ժամանակներում»<sup>25</sup>:

2008 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, ընդհուպ մինչև 2020 թ., ՀՀ ներհոսող ՕՈՒՆ-ը դրսևորել են խիստ բացասական միտումներ (գծապատկեր 3), որոնք ավելի ուժգնացան COVID-19 համավարակի հետևանքով: ՄԱԿ-ի World Investment Report 2021-ում ներկայացված է այդ ազդեցության չափը. 2020 թ. 35%-ով նվազել են ՕՈՒՆ-ի համաշխարհային հոսքերը, իսկ ՀՀ-ում՝ 54%-ով: Չեկոյցում նշվում է, որ ավելի մեծ է եղել դեպի զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ հոսքերի անկումը: Հետևաբար՝ ՀՀ Կառավարության 2021–2026 թթ. ծրագրով սահմանված նպատակին հնարավոր է հասնել ներքին խնայողությունների կենտրոնացմամբ, ՕՈՒՆ-ի նվազող հոսքերը սահմանային տեխնոլոգիաների ներդրմանն ուղղորդելով, որոնք կնպաստեն տնտեսության բարդության աստիճանի բարձրացմանը:




**Գծապատկեր 3. Հիմնական կապիտալի կուտակման (ՀԿԿ, ՀՆԱ-ի նկատմամբ, %), համախառն խնայողությունների (ՀԽ, ՀՆԱ-ի նկատմամբ, %), ՕՈՒՆ-ի և ռեսուրսային ճեղքվածքի (ՀԿԿ-ՀԽ, ՀՆԱ-ի նկատմամբ, %) շարժընթացը ՀՀ-ում<sup>26</sup>**

Գծապատկերից երևում է, որ տևական ժամանակ ռեսուրսային ճեղքվածք է եղել հիմնական կապիտալի կուտակման և համախառն խնայողությունների միջև: Դրա ոչ մեծ մասը ծածկվել է ՕՈՒՆ-ի, իսկ նշանակալի մասը՝ մասնավոր կորպորատիվ հատվածի խնայողությունների և փոխառությունների հաշվին:

<sup>25</sup> Howitt P., Mayer-Foulkes D., R&D, Implementation, and Stagnation: A Schumpeterian Theory of Convergence Clubs// Journal of Money, Credit and Banking, Vol. 37, No. 1, Feb., 2005, pp. 147-177.

<sup>26</sup> Հաշվարկները կատարել և գծապատկերը կազմել են հեղինակները: Աղբյուր՝ ՀՎՏ, 2000-2021: Համաշխարհային բանկի տվյալների բազա:



**Գծապատկեր 4. ՀՀ համախառն ներքին խնայողությունների շարժընթացը (ՀՆԱ-ի նկատմամբ, %), 1990–2020 թթ.<sup>27</sup>**

Այդուհանդերձ, նկատի ունենալով, որ ՀՀ տնտեսական բարդության աստիճանը ցածր է, ինչի հետևանքով արտահանվող արտադրանքը նույնպես բարդության ցածր մակարդակ ունի, տասնամյակներ շարունակ ՀՀ արտաքին առևտրի հաշվեմնացորդը բացասական է եղել, ինչն էլ բացասաբար է անդրադարձել համախառն ներքին խնայողությունների (ՀՆԽ) մակարդակի վրա: Արդյունքում՝ ՀՆԽ մակարդակը 1991–2020 թթ. ժամանակահատվածում կազմել է, միջին հաշվով, 1% (գծապատկեր 4): Համեմատության համար նշենք՝ աշխարհի միջին ցուցանիշը կազմել է՝ 25.9%, միջինից բարձր եկամտով երկրներինը՝ 33.8%, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներինը՝ 25.1%<sup>28</sup>: ՀՀ և ընտրված տարածաշրջանների ՀՆԽ և ՀԿԿ ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Վերոնշյալ վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ. 1) Կայուն տնտեսական աճի և զարգացման համար առանցքային է երկրի տնտեսության բարդության դերը, որն արտադրողական գիտելիքների կուտակման և արդյունավետ կիրառման արդյունք է: 2) Երկրի տնտեսական բարդության աստիճանը պայմանավորած է համաշխարհային տեխնոլոգիական սահմանից դրա հեռավորությունից: 3) Սահմանային տեխնոլոգիաների ներդրման համար անհրաժեշտ արտադրողական գիտելիքների փոխանցման կապուղիներից մեկն օտարերկրյա ուղղակի ներդրումներն են, որոնց ներհուքի մակարդակը բավարար չէ, իսկ վերջին տասնամյակի միտումների և COVID-19-ի հետևանքով ավելի են մեծացել ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված անորոշությունները: 4) Անկախությունից ի վեր՝ երեք տասնամյակում, ներքին և արտաքին ներդրումների տեղաբաշխումը գրեթե չի նպաստել երկրի տնտեսական բարդության աստիճանի բարձրացմանը: 5) Ներքին խնայողություններով ներդրումների ֆինանսավորման ապահովվածության ցածր մակարդակը զսպում է երկրի տնտեսության կայուն աճը և զարգացումը: 6) Համաշխարհային տեխնոլոգիական սահմանին մոտենալու և ՀՀ տնտեսության բարդության աստիճանը բարձրացնելու համար անհրաժեշտ ներդրումները ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորելու կարևորությունը մեծացել է:

<sup>27</sup> Աղբյուր՝ World Development Indicators// <https://data.worldbank.org/indicator>

<sup>28</sup> Աղբյուր՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա: World Development Indicators// <https://data.worldbank.org/indicator>

Աղյուսակ 3

**ՀՀ և երկրների ընտրված խմբերի համախառն խնայողությունները և հիմնական կապիտալի կուտակումը**

		1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000
<b>Հայաստան</b>	ՀԽ	-	-	-5.4	2.6	-2.1	1.8	3.9	0.8	2.8	-0.9
	ՀԿԿ	28.5	17.1	12.5	20.2	16.2	17.9	16.2	16.2	16.4	21.7
<b>Միջինից բարձր եկամտով երկրներ</b>	ՀԽ	31.0	31.0	33.3	33.1	31.0	30.4	30.4	29.5	28.9	29.5
	ՀԿԿ	23.4	26.2	29.9	28.8	27.1	26.7	26.3	26.6	25.5	26.0
<b>Աշխարհ</b>	ՀԽ	23.3	23.7	23.9	24.6	24.6	25.1	25.6	25.3	24.9	25.6
	ՀԿԿ	23.8	24.1	24.7	24.4	24.0	24.1	24.1	24.3	24.0	24.2
<b>Եվրոպա և Կենտրոնական Ասիա</b>	ՀԽ			-	25.0	23.5	23.2	20.2	20.1	23.6	28.2
	ՀԿԿ	22.3	24.1	22.2	22.7	21.7	21.5	21.3	19.5	17.4	19.2
		2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
<b>Հայաստան</b>	ՀԽ	5.4	10.2	16.3	19.7	24.3	28.5	28.6	27.9	14.0	13.2
	ՀԿԿ	20.8	24.8	27.1	28.1	35.1	41.9	46.8	42.9	39.4	30.7
<b>Միջինից բարձր եկամտով երկրներ</b>	ՀԽ	29.8	30.8	32.7	35.0	35.3	37.3	38.4	39.2	36.7	37.9
	ՀԿԿ	26.5	27.1	29.1	30.1	30.3	30.3	31.3	33.2	33.5	33.6
<b>Աշխարհ</b>	ՀԽ	24.9	24.6	25.1	26.3	26.8	28.0	27.9	27.1	25.0	26.3
	ՀԿԿ	24.0	23.6	24.1	24.6	25.1	25.4	25.5	24.9	24.5	24.7
<b>Եվրոպա և Կենտրոնական Ասիա</b>	ՀԽ	26.8	25.6	24.7	26.4	26.9	27.6	27.2	27.1	21.6	24.6
	ՀԿԿ	19.6	19.5	20.5	22.0	22.0	22.3	24.8	25.3	23.3	23.3
		2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
<b>Հայաստան</b>	ՀԽ	11.1	14.1	14.8	13.3	18.4	17.8	16.9	15.3	9.8	14.7
	ՀԿԿ	23.6	21.2	20.0	20.6	17.4	17.6	16.7	15.8	16.6	43.5
<b>Միջինից բարձր եկամտով երկրներ</b>	ՀԽ	37.3	36.5	35.4	35.4	34.1	33.3	33.8	33.9	33.2	33.9
	ՀԿԿ	33.9	34.1	33.6	32.5	31.8	31.8	32.1	31.8	32.1	30.3
<b>Աշխարհ</b>	ՀԽ	26.6	26.8	26.4	26.7	26.3	25.7	26.4	26.5	26.4	26.1
	ՀԿԿ	24.9	24.9	25.0	24.8	24.6	24.7	24.9	25.1	25.2	25.4
<b>Եվրոպա և Կենտրոնական Ասիա</b>	ՀԽ	26.4	25.5	24.1	24.5	25.5	24.3	25.2	27.3	25.6	25.8
	ՀԿԿ	23.9	23.8	23.9	23.6	23.5	23.8	24.0	23.4	23.1	23.7

Կազմել են հեղինակները:

Աղբյուր՝ Համաշխարհային բանկի վրլայնների բազա: World development indicators, <https://data.worldbank.org/indicator>

ՀՀ-ում տնային տնտեսությունների խնայողությունների կազմակերպված ձևը հիմնականում ավանդներն են, որոնք 2020 թ. (1661.9 մլրդ դրամ), 1997 թ. համեմատությամբ (46.7 մլրդ դրամ), աճել են 35.6 անգամ: 1997 թ. առևտրային բանկերի վարկային ներդրումները կազմել են 46.6 միլիարդ դրամ, այսինքն՝ բնակչության ավանդները 100.2%-ով ծածկել են տրամադրված վարկերը: 2020 թ. այդ ծածկույթը կազմել է 42.7%, ինչը նշանակում է, որ առևտրային բանկերի սեփական միջոցները նշանակալի աճել են: Կարելի է եզրակացնել, որ տնային տնտեսությունների խնայողությունները նպաստել են ՀՀ բանկային համակարգի զարգացմանը, անշուշտ, ԿԲ-ի կողմից կոշտ պետությանը կամ զարգացման պետությանը բնորոշ գործառույթների իրականացմամբ: Հետևաբար, նույնկերպ, հոգուտ տնտեսության իրական հատվածի՝ արագ աճող և ընթացիկ համաշխարհային տեխնոլոգիական սահմանին մոտենալու նպատակով խնայողությունների ներգրավումը կարող է

նպաստել նաև երկրի տնտեսական զարգացմանը: Այդ գործընթացին նպատակասլացություն և համակարգվածություն հաղորդելու առումով, նպատակահարմար է թվում օտարերկրյա ուղղակի ներդրումների արտահանման հարթակների մոտեցման կիրառումը ՀՀ-ում, ինչը կարևորվում է ՀՀ Կառավարության 2021–2026 թթ. ծրագրի հետևյալ դրույթով. «Հայաստանը, ունենալով փոքր տնտեսություն, միջազգային շուկաներում կարող է մրցունակ լինել՝ թողարկելով տնտեսապես բարդ, բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքներ և ծառայություններ»<sup>29</sup>: Դրա համար պահանջվում են ոչ սովորական մոտեցումներ: Ակնհայտորեն՝ ՀՀ տնտեսության հետագա աճը և զարգացումը կապված են արտաքին շուկաների հնարավորություններն օգտագործելու՝ երկրի կարողության հետ: Արդեն նշված «The Growth Report»-ում «տնտեսական հրաշքների» 13 օրինակների ուսումնասիրությամբ բացահայտված ապշեցուցիչ հինգ կողմերից մեկը եղել է համաշխարհային տնտեսության հնարավորությունները լիարժեք օգտագործելը, իսկ երկրորդը՝ խնայողությունների և ներդրումների բարձր ցուցանիշները (մնացած երեքը՝ մակրոտնտեսական կայունություն, ռեսուրսների բաշխում շուկայի միջոցով, նվիրված, վստահություն ներշնչող և կարողունակ կառավարություններ)<sup>30</sup>: Հետևաբար՝ ՀՀ Կառավարության ծրագրում նշվում է հենց այդ կետերից մեկի՝ արտաքին շուկաների հնարավորությունների օգտագործման մասին: Այսինքն՝ տեխնոլոգիական սահմանին մոտենալը ենթադրում է ներքին խնայողությունների կենտրոնացում և ուղղորդում առաջավոր տեխնոլոգիաներով թողարկված արտադրանքի մեծ մասի արտահանմանը՝ նկատի ունենալով ՀՀ շուկայի փոքր լինելը:

Ամբողջ աշխարհում ՕՌԻՆ-ի աճն արտացոլում է ինչպես արտադրության միջազգային բաժանումը՝ կապված գլոբալացման հետ, այնպես էլ արտահանմանը կողմնորոշված այդ տեսակի ներդրումների խրախուսման քաղաքականությունը զարգացող երկրների տնտեսական ռազմավարությունների շրջանակներում: Այդպիսի ներդրումներն անվանում են արտահանման հարթակի ՕՌԻՆ (Export Platform FDI): Կարողինա Էխոլմը, Ռիկարդ Ֆորսլիդը և Ջեյմս Մարկուսենը<sup>31</sup> արտահանման հարթակի ՕՌԻՆ-ը սահմանում են որպես ներդրումներ արտադրություն ընդունող երկրում, որտեղ թողարկված արտադրանքը հիմնականում վաճառվում է երրորդ, այլ ոչ թե ընդունող կամ ներդրող երկրների շուկաներում: Արտահանման հարթակի ներդրումների հայեցակարգը տասնամյակներ շարունակ փորձարկվել է մի շարք երկրներում (Կանադա, Մեքսիկա, Իռլանդիա և այլն)<sup>32</sup>: Նկատի ունենալով, որ առանց ներքին խնայողությունների միջոցով ներքին ներդրումների ֆինանսավորման հնարավոր չէ մոտենալ տեխնոլոգիական ընթացիկ սահմանին, այդ հայեցակարգ է ներմուծվել ներքին ներդրումների կամ խնայողությունների տարրը: Հետևաբար՝ այդպիսի հարթակը կանվանվի «արտահան-

<sup>29</sup> ՀՀ Կառավարության 2021–2026 թվականների ծրագիր, էջ 29:

<sup>30</sup> St' u Commission on Growth and Development. The Growth Report : Strategies for Sustained Growth and Inclusive Development. Washington, DC : World Bank, 2008, էջ 21:

<sup>31</sup> St' u Ekholm K., Forslid R., Markusen J., Export-platform foreign direct investment. NBER Working Paper, No. 9517, February 2003, 35 էջ:

<sup>32</sup> St' u Վարդանյան Դ., Արտահանման հարթակների օտարերկրյա ուղղակի ներդրումների միջազգային փորձը: «Ալլընտրանք» գիտական հանդես, 2019, էջ 82-88:

ման հարթակի օտարերկրյա և ներքին ներդրումներ» (ԱՀՕՆՆ): Որպես նպատակային երրորդ երկրների շուկաներ կդիտարկվեն ԵԱՏՄ<sup>33</sup> և Մերձավոր Արևելքի որոշ երկրների շուկաները, ինչն առանձին հետազոտության առարկա կարող է դառնալ: Այս առումով, ԱՀՕՆՆ գաղափարը համահունչ է ԵԱՏՄ «Եվրասիական տնտեսական միությունում տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների և դրա օգտագործմանն ուղղված միջոցների մասին» փաստաթղթի՝ «Տնտեսության՝ երրորդ երկրներ արտահանման մեծացման և դիվերսիֆիկացման ներուժ ունեցող ճյուղերը» 2.2 կետին, որտեղ նշվում են այն «հիմնական գործոնները, որոնց վերլուծությունները թույլ են տալիս տնտեսության ոլորտում ինտեգրման ներուժի առկայության մասին եզրակացություն անել. ա) ապրանքների (ծառայությունների) արտաքին առևտրի մասով անդամ պետությունների համեմատական առավելությունները՝ աշխարհի այլ երկրների հետ համեմատած (աշխարհի բոլոր երկրների մասով որոշվում են Բալասայի ինդեքսով), բ) երրորդ երկրներ և Միության անդամ պետություններ փաստացի և հնարավոր արտահանման կառուցվածքը»<sup>34</sup>:


ԱՀՕՆՆ զարգացման համար կարևորվում են երկու տեսակի խթաններ. (1) ԱՀՕՆՆ օտարերկրյա ներդրողներին տրամադրվող հարկային արտոնությունները, (2) ԱՀՕՆՆ տեղական ներդրողներին տրամադրվող հարկային արտոնությունները և սուբսիդիաները՝ ներքին խնայողությունների խթանման և դրանք սահմանային տեխնոլոգիաների ներդրմանն ուղղորդելու նպատակով: Կառավարությունների մեծ մասն ակտիվորեն առաջ է մղում իր երկիրը՝ որպես ներդրումային վայր՝ զարգացման նպատակներին հասնելու համար մասնավոր կապիտալ, տեխնոլոգիաներ և կառավարչական հմտություններ ներգրավելու նպատակով: Սահմանվում են արտոնություններ, խթաններ: Այդ նպատակով դեռևս 1994 թ. ընդունվել է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը: ԱՀՕՆՆ առումով, խոսքը վերաբերում է Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված օտարերկրյա ներդրումների տեսակներից բ) կետով ամրագրվածին. «Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցությամբ նոր ձեռնարկություններ հիմնադրելու կամ գործող ձեռնարկություններում բաժնեմաս ձեռք բերելու միջոցով»: Ըստ էության, Օրենքի ընդունումից ի վեր, բոլոր տեսակի օտարերկրյա ներդրումներին տրամադրվել են միևնույն արտոնությունները, խթանները: Արդյունքում, որոշ փոքր բացառություններով, երկրի տնտեսության տեխնոլոգիական մակարդակի նշանակալի առաջընթաց չի նկատվել, ինչի վկայությունը վերոնշյալ համաթվերն են: Խնդիրն այն է, որ հարկային խրախուսումը պետք է հետապնդի հստակ նպատակներ՝

<sup>33</sup> Թեպետ, համաձայն Распоряжение Евразийского межправительственного совета от 7 марта 2017 г. N 2 փաստաթղթի, ԵԱՏՄ անդամ պետություններ արտահանումը դիտարկվում է որպես ներքին առևտրին նմանվող երևույթ, այդուհանդերձ, Միության շրջանակներում ՀՀ մասնագիտացման խորացման դեպքում Միության ներքին շուկա արտադրանքի մատակարարմամբ հնարավոր է փոխարինել այլ անդամ պետություններ երրորդ երկրներից ներմուծումը՝ այդպիսով մեծացնելով ՀՀ արտահանման ծավալը:

<sup>34</sup> Распоряжение Евразийского межправительственного совета от 7 марта 2017 г., N 2, О сферах экономики, обладающих интеграционным потенциалом в Евразийском экономическом союзе, и мерах, направленных на его использование.

երկրի զարգացման տեսանկյունից, իսկ ՕՈՒՆ-ի խթանումը շաղկապված լինի դրա հետ. ներդրումները պետք է ներգրավել այնպիսի ոլորտներ, որոնք նպաստում են երկրի տեխնոլոգիական առաջընթացին (օրինակ՝ էլեկտրոնիկայի), և դրանք չխրախուսել այլ ոլորտներում (օրինակ՝ հանքարդյունաբերության), ինչպես ընդունված է եղել համաշխարհային տեխնոլոգիական սահմանին մոտենալու հաջողված փորձ ունեցող երկրներում<sup>35</sup>: Տեխնոլոգիական ընթացիկ սահմանին ՀՀ-ի մոտենալու՝ օտարերկրյա և ներքին ներդրումների արտահանման հարթակի հայեցակարգային շրջանակը ներկայացված է գծապատկեր 5-ում:

Ինչպես երևում է գծապատկեր 5-ից, ՀՀ տնտեսական բարդության աստիճանի բարձրացման, հետևաբար՝ կայուն և տևական տնտեսական աճի համար նախադրյալների ստեղծման ֆինանսական կողմը ենթադրում է խթանների երկու տեսակ. հարկային խթաններ՝ սահմանային տեխնոլոգիաների փոխանցումն ապահովող ՕՈՒՆ-ի համար և սուբսիդավորում՝ սահմանային տեխնոլոգիաներ (ՍՏ) ներդնելու համար ներքին խնայողությունները կենտրոնացնելու նպատակով:



**Գծապատկեր 5. Տեխնոլոգիական ընթացիկ սահմանին ՀՀ-ի մոտենալու՝ արդահանման հարթակի օտարերկրյա և ներքին ներդրումների (ԱՀՕՆՆ) հայեցակարգային շրջանակը**

Նմանատիպ հարկային խթանները համապարփակ ներկայացված են ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի Tax Incentives and Foreign Direct Investment փաստաթղթում<sup>36</sup> և մի շարք արժեքավոր մշակումներում<sup>37</sup>. Սովորաբար, նմանատիպ արտահանման հարթակները գործում են ազատ առևտրի գոտիներում (Free-trade zone-FTZ): Նոր ստեղծվող ձեռնարկություններում ներդրումները (Greenfield Investment) մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես զարգացող երկրների համար, քանի որ նպաստում են տնտեսության արագ ընդլայնմանը, բարձր վարձատրվող և բարձր

<sup>35</sup> Տե՛ս **Commission on Growth and Development**. The Growth Report: Strategies for Sustained Growth and Inclusive Development. Washington, DC : World Bank, 2008, էջ 34:

<sup>36</sup> Տե՛ս Tax Incentives and Foreign Direct Investment. A Global Survey. New York and Geneva, UN, 2000, էջ 13:

<sup>37</sup> Devereux M., Griffith R., 2003; Egger P., Loretz S., 2008; Muthitacharoen A., 2020:



որակավորում պահանջող աշխատատեղերի ստեղծմանը և տեխնոլոգիական առաջընթացին:

Հարկ է նշել, որ ներդրումների վայրն ընտրելու վերաբերյալ որոշումները կախված են հարկային ծախսերից՝ ինչպես ներքին, այնպես էլ միջազգային: Հետևաբար՝ հարկային խթաններ մշակելիս սովորաբար հաշվի է առնվում հետևյալը. 1) ներդրողները կանգնած են երկու կամ ավելի փոխադարձաբար բացառող նախագծերի միջև դիսկրետ ընտրության առջև, 2) վերազգային ընկերությունների գտնվելու վայրը և այն, որ նրանց ընտրությունը կախված է արդյունավետ միջին հարկային դրույքաչափից, 3) որպես հիմք կարող են ընդունվել երկկողմանի արդյունավետ հարկման մոտեցումները:

Տնտեսագետների շրջանում լայնորեն ընդունված է, որ բազմազգ ընկերությունների արտադրության և ներդրումային որոշումների համար կորպորատիվ հարկման դերի վերաբերյալ փորձառական աշխատանքը պետք է հիմնվի հարկային ավելի ընդգրկուն բաղադրիչների, այլ ոչ միայն օրենսդրությամբ սահմանված կորպորատիվ հարկի դրույքաչափերի վրա:

Մայքլ Դևերոն և համահեղինակները նշում են. «Սովորաբար, կորպորատիվ եկամտային հարկը... գործում է որպես խոչընդոտ ներդրումների համար: Այդ վերափոխումների երկու կողմը (դրույքաչափի նվազեցում և բազայի ընդլայնում) փոխհատուցող ազդեցություն են ունենում այդ խոչընդոտի վրա. ցածր հարկային դրույքաչափը բարձրացնում է ներդրումների խթանը, մինչդեռ ամորտիզացիոն ցածր մասհանումները մեծացնում են դրանք»<sup>38</sup>: Հեղինակներն օգտագործել են «արդյունավետ հարկային դրույքաչափեր» (effective tax rate-ETR) եզրույթը՝ լինի սահմանային (effective marginal tax rate-EMTR), թե միջին (effective average tax-EATR)՝ հարկային օրենսդրության վրա հիմնված միջոցառումների համար:

ՕՈՒՆ-ի խթանները որպես հիմք են ընդունում ինչպես հարկային դրույքաչափը, այնպես էլ հարկային բազան, ինչը պայմանավորված է վերոնշյալ առաջին կետով, մասնավորապես՝ դիսկրետ ընտրությամբ. ա) որ տեսակի ներդրումը պետք է ձեռնարկել, բ) ներդրումների ծավալը, գ) ներդրումների վայրը: Փիթեր Էգերը և Սայմոն Լոռեցը<sup>39</sup>, ուսումնասիրելով ՏՀՀԿ երկրներում գործող հարկային օրենսդրությունները և հարկային բոլոր համաձայնագրերը, հաշվարկել են արդյունավետ (սահմանային և միջին) հարկային դրույքաչափերը, որոնք ծառայում են ՏՀՀԿ երկրների միջև երկկողմանի արտահոսող ՕՈՒՆ-ի ծավալների վրա կորպորատիվ հարկման ազդեցությունը գնահատելու համար: Նրանք հանգել են հետևյալին. 1) կորպորատիվ հարկերն էականորեն ազդում են արտադրության և տեղաբաշխման վերաբերյալ վերազգային ընկերությունների որոշումների վրա, 2) զույգ երկրներին բնորոշ հարկային բեռի հարաչափն արտացոլում է ուղղակի ազդեցությունը ՕՈՒՆ-ի վրա՝ ազգային ընկերությունների համար հարկային դրույքաչափերի հաշվառմամբ, 3) միակողմանի հարկային դրույքաչափերը ներդրումների ծագման և ընդունող երկրներում արտացոլում են հարկային դրույքաչափերի դերը, որին հանդիպում են ազգային ընկերությունները համապատասխանա-

<sup>38</sup> Devereux M.P., Griffith R., Klemm A., Economic Policy, Volume 17, Issue 35, 1 October 2002, p. 452.

<sup>39</sup> Տե՛ս Egger P., Loretz S., Bilateral Effective Tax Rates and Foreign Direct Investment // International Tax and Public Finance, 16(6), 2008, էջ 1-24:

բարձր ծագման տվյալ երկրում և ընդունող երկրում, 4) միայն միակողմանի արդյունավետ հարկային դրույքաչափերի օգտագործումը կարող է հանգեցնել երկկողմանի ՕՌԻՆ-ի վրա հարկային գործիքների (օրինակ՝ երկկողմանի հարկային համաձայնագրերի միջոցով) փոփոխության ազդեցության մասին ոչ արժանահավատ եզրահանգումների: Օրինակ՝ հնարավոր է, որ ընդունող երկրում միակողմանի հարկային դրույքաչափերի բարձրացումը, որն ազդում է ազգային ընկերությունների վրա, սխալմամբ կապվի այդ երկրում ՕՌԻՆ-ի նվազման հետ:

Վերոնշյալը հիմք է՝ եզրակացնելու, որ սահմանային տեխնոլոգիաների ներդրման նպատակով ՀՀ ՕՌԻՆ-ի ներգրավման հարկային խթանները պետք է հիմնված լինեն երկկողմանի արդյունավետ հարկային դրույքաչափերի վրա, որոշ ճշգրտումով՝ կապված ՀՀ-ի՝ ծովային ելք չունեցող երկրի կարգավիճակի հետ: Համաձայն ՄԱԿ-ի գնահատումների՝ ծովային ելք չունեցող երկրներն արտահանումից մինչև 15%-ով պակաս եկամուտ են ստանում, քան ունեցողները: UNCTAD-ի փորձագետները կարծում են, որ «տարածաշրջանային առևտրատնտեսական ինտեգրումը, ինչպես նաև ոլորտների զարգացման նպատակով տարածության նկատմամբ ոչ զգայուն, ՕՌԻՆ-ի ներգրավման ջանքերը կարող են օգնել՝ փոխհատուցելու այդ երկրների՝ աշխարհագրական առումով թույլ կողմը»<sup>40</sup>: ՀՀ այդ թույլ կողմը մեղմելու մտտեցում կարող է դիտվել «արդյունավետ հարկային դրույքաչափերի» դիսկոնտավորումը՝ արտահանման և ներմուծման հավելյալ ծախսերի գործակցով: Նկատի ունենալով ծովային ելք չունենալու գործոնը և հիմք ընդունելով Մայքլ Դևերոյի ու մյուսների մեթոդաբանությունը՝<sup>41</sup> արտահանման հարթակի ՕՌԻՆ-ի համար «արդյունավետ հարկային դրույքաչափերի» հաշվարկը կարող է կատարվել հետևյալ բանաձևերով.

1. արդյունավետ սահմանային հարկային դրույքաչափ.

$$DEMTR = EMTR * (XC_i + M_j),$$

2. արդյունավետ միջին հարկային դրույքաչափ.

$$DEATR = EATR * (XC_i + M_j),$$


որտեղ՝  $DEMTR$ -ը և  $DEATR$ -ը ծովային ելք չունենալու գործոնով ճշգրտված, համապատասխանաբար՝ սահմանային և միջին հարկային դրույքաչափերն են,  $XC_i$ -ն՝ արտահանվող  $i$  արտադրանքով ճշգրտման գործակիցը,  $MC_i$ -ն ներմուծվող արտադրանքովը: Նշված գործակիցները կարող են ստացվել աշխարհի կամ ՕՌԻՆ-ի ծագման երկրի արտահանման և ներմուծման ծախսերի մակարդակները հարաբերելով ընդունող երկրի, այս դեպքում՝ ՀՀ արտահանման և ներմուծման ծախսերի մակարդակներին՝ ըստ թողարկվելիք արտադրանքի: Ակնհայտ է, որ այդ գործակցի մեծությունը պայմանավորված կլինի թողարկվելիք արտադրանքի բարդությամբ<sup>42</sup>, ինչի ավելացմամբ տարիների ընթացքում բարձրանում է նաև երկրի տնտեսական բարդության աստիճանը, այդպիսով՝ դրական ազդեցություն ունենալով արտահանվող արտադրանքի ապահովագրական և փոխադրման ծախսերի վրա: Մյուս կողմից՝ ՕՌԻՆ-ի արտահանման հարթակում արտադրանք թողարկելու համար հարկ է ներմուծել որոշակի հումք և նյութեր, ինչը կպահանջի փոխադրման

<sup>40</sup> Development and Globalization: Facts and Figures. UNCTAD. New York and Geneva, 2004, p. 4.

<sup>41</sup> Տե՛ս **Devereux M.P., Griffith R., Klemm A.**, նշվ. աշխ., էջ 452:

<sup>42</sup> Տե՛ս Country & Product Complexity Rankings, <https://atlas.cid.harvard.edu/rankings/product>

ավելի մեծ ծախսեր: Գծապատկեր 6-ում, օրինակ, ներկայացված է ներմուծման ծավալի նկատմամբ (%) ապահովագրական և բեռնափոխադրումների ծախսերի (Costs of insurance and freight services) մակարդակի շարժընթացը 1980-2002 թթ.<sup>43</sup>, երբ, տեղեկատվական տեխնոլոգիական հեղափոխության ազդեցությամբ, ինտենսիվացան ոչ միայն տնտեսական գլոբալացման, այլև արտադրանքի բարդության աստիճանի բարձրացման գործընթացները:



Գծապատկեր 6. Ապահովագրական և բեռնափոխադրումների ծախսերը<sup>44</sup>

Ինչպես երևում է գծապատկերից, ծովային ելք չունեցող երկրների ներմուծման ծախսերը նշանակալի գերազանցում են մյուս երկրների ծախսերը: Հաշվարկի համար կատարենք որոշ ենթադրություններ.  $EMTR = 10\%$ ,  $EATR = 15\%$ ,  $XC_{=i} = 0.05$ ,  $M_j = 0.1$ : Հետևաբար՝  $MTR = 8.5\%$ ,  $DEATR = 12.75\%$ :

Այս մոտեցումը միտված է ծովային ելք չունենալու գործոնի չեզոքացմանը: ՀՀ արտահանման և ներմուծման ծախսերի հաշվարկման համար կապահանջվեն լրացուցիչ ուսումնասիրություններ, ընդ որում, յուրաքանչյուր ներդրումային նախագծի համար կապահանջվեն հատուկ հաշվարկներ, որոնց միջոցով ստացված դիսկոնտավորման գործակիցները տարբեր երկրների ներդրողների և ներդրման ոլորտի համար տարբեր կլինեն:

Միաժամանակ, հարկ կլինի ուսումնասիրել ՀՀ երկկողմանի և բազմակողմանի հարկային համաձայնագրերը՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան ճշգրտումներ անելու նպատակով: Օտարերկրյա ներդրողներին անհրաժեշտ են հիմնավոր փաստարկներ առ այն, թե ինչու ներդրումներ պետք է անել տվյալ երկրում: Հետևաբար՝

- առաջարկվում է միջին հարկային դրույքաչափի ճշգրիտ չափում, որը պետք է հավասար լինի արդյունավետ սահմանային հարկային դրույքաչափի միջին կշռված մեծությանը, որտեղ կշիռները կախված են ներդրումների եկամտաբերությունից,
- ներկայացնել և համադրել այդ ցուցանիշի բաշխումը ներքին և օտարերկրյա ներդրումների համար:

Մի կարևոր նկատառում՝ կապված ՕՌԻՆ-ի բաշխման տարասեռության հետ: Աթիֆատ Մուֆիտախարոենը զուտ ՕՌԻՆ-ը դիտարկել է որպես երկ-

<sup>43</sup> Հետագա տարիների զեկույցներում չեն հանդիպում նման տվյալներ: Չնայած դրան, այդ տվյալները կարող են կողմնորոշիչ լինել այստեղ ներկայացված մոտեցման համար:

<sup>44</sup> *St'u Development and Globalization: Facts and Figures*. UNCTAD. New York and Geneva, 2004, էջ 5:

կողմանի արդյունավետ միջին հարկային դրույքաչափերի և այլ փոփոխականների ֆունկցիա: Այս մոտեցումը հաշվի է առնում ՕՈՒՆ-ի ասիմպտոտիկ բաշխումը և հնարավորություն ընձեռում համակողմանի դիտարկելու հարկային զգայունությունը ՕՈՒՆ-ի բաշխման մեջ՝ վերահսկելով չդիտարկվող բնութագրերն ըստ երկրների, ինչպես նաև ժամանակի ընթացքում ընդհանուր ցնցումները, օրինակ՝ 2008 թ. ֆինանսական կամ COVID-19 համավարակի առաջացրած ճգնաժամերը: Ընդունելով, որ հարկումը կարևոր դեր է խաղում ՕՈՒՆ-ի ներգրավման առումով, այդուհանդերձ, նա կարծում է, որ թեպետ վիճակագրորեն դրանք նշանակալի են ներդրումների բաշխման մեջ, ըստ ամբողջ բաշխման միասեռ չեն: Հարկերը պակաս նշանակություն ունեն ներդրումային մեծ հոսքերով երկրների համար, որտեղ ներդրողներն արդեն իսկ ծանոթ են ընդունող երկրների հետ, ինչը կարևոր է՝ ըմբռնելու հարկման ազդեցությունը բաշխման վրա: Եզրակացվել է, որ ընդունող երկրի հիմնարար գործոնները՝ աշխատանքի արտադրողականությունը և օրենքի գերակայությունը, կարևոր են ՕՈՒՆ-ի համար. դրանց տնտեսական նշանակությունն ավելի բարձր է, քան հարկերինը<sup>45</sup>: Հետևաբար՝ քաղաքականություն մշակողների կողմից հարկային խթանների, նշված հիմնարար և յուրաքանչյուր երկրի համար յուրահատուկ գործոնների ըմբռնումը կարևոր է ՕՈՒՆ-ի համար:

Բացի վերոնշյալ նկատառումներից, որոշ հետազոտությունների<sup>46</sup> արդյունքներ վկայում են, որ երկկողմանի հարկային դրույքաչափերը ընդունող ոչ մեծ երկրներում ցուցադրում են պակաս ընդհանուր արդյունավետ դրույքաչափ, թեև ավելի խոշոր երկրները մեծ հավանականությամբ նվազեցնում են հարկային բեռը երկկողմանի մակարդակում՝ հարկային համաձայնագրերի միջոցով: Ակնհայտ է, որ կպահանջվեն լրացուցիչ հետազոտություններ՝ հարկային գրավիչ խթանների մշակման համար: Սկզբունքորեն, ՀՀ-ի համար էական չպետք է դիտարկվեն հարկային եկամուտները, երբ խոսքը վերաբերում է սահմանային տեխնոլոգիաներ ներդնելուն, տեխնոլոգիական ճեղքում անելուն:

Սույն հոդվածի նպատակից չի բխում երկկողմանի արդյունավետ հարկային դրույքաչափերի մեթոդական մշակումը կամ հարկային խթաններին առնչվող հարցերի դիտարկումը. խոսքը վերաբերում է միջազգային պրակտիկայում իրենց արդարացրած հարկման խթաններին, որոնք նպաստել են ոչ միայն ՕՈՒՆ-ի ներգրավմանը, այլև ընդունող երկրների տեխնոլոգիական առաջընթացն ապահովելուն դրանց ուղղորդմանը:

Ինչ վերաբերում է սահմանային տեխնոլոգիաների ֆինանսավորման մյուս ներքին աղբյուրին՝ Կառավարության կողմից սուբսիդավորմանը, ապա հարկ է նշել, որ սահմանային տեխնոլոգիաների ներդրման գործընթացների արագացմանը միտված ներքին և արտաքին ներդրումների հարթակի գաղափարը հիմնված է Կառավարություն–մասնավոր հատված գործընկերության զարգացման վրա: Առաջարկվող մոտեցումը նաև ենթադրում է խնայողական գործընթացներում մասնավոր հատվածի ներառականության ընդ-

<sup>45</sup> Տե՛ս **Muthitacharoen A.**, Tax Incentives and Foreign Direct Investment in Developing Countries, Austaxpolicy: Tax and Transfer Policy Blog, 9 March 2020:

<sup>46</sup> Տե՛ս **Loretz S.**, Determinants of Bilateral Effective Tax Rates: Empirical Evidence from OECD Countries. Fiscal Studies, Vol. 28, No. 2, 2007, էջ 227-229:

լայնում՝ առաջավոր տեխնոլոգիաների ներդրման նախագծերի շրջանակում: Հատկապես կարևորվում են տնային տնտեսությունների պասիվ խնայողությունները (ավանդների ձևով պահվող) անմիջականորեն տնտեսության իրական հատված ուղղորդելուն, ինչի համար պահանջվում են համապատասխան խթաններ, որոնցից մեկը արտահանման հարթակի ներդրումային նախագծերի սուբսիդավորումն է:

**Եզրակացություններ:** Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2021–2026 թթ. ծրագրային դրույթը, կապված ՀՀ տնտեսական բարդության աստիճանի բարձրացման նպատակով համալիր միջոցառումների իրականացման հետ, առաջարկվել է դրա իրագործման մեխանիզմ՝ ներքին խնայողությունների ներգրավմամբ, նկատի ունենալով, որ այդ նպատակին հասնելու համար պետք է ձեռնարկել քայլեր՝ տեխնոլոգիական համաշխարհային սահմանին մոտենալու ուղղությամբ, ինչը հնարավոր է օտարերկրյա և տեղական ներդրողների համագործակցության արդյունքում: Սահմանային տեխնոլոգիաներին քաջատեղյակ օտարերկրյա ներդրողների ներգրավումը նվազեցնում է դրանց ներդրման ծախսերը: Ուստի առաջավոր տնտեսություններում խնդիրներ չեն առաջանում դրանք ներդնելիս: Առանց առաջավոր երկրների աջակցության՝ տեխնոլոգիական սահմանից հեռավոր երկրների համար սահմանային տեխնոլոգիաների ներդրումը բավական թանկ կարժենա: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, այդ խնդրի լուծումը տեղական ձեռնարկատերերի և սահմանային տեխնոլոգիաներին տիրապետող օտարերկրյա ներդրողների համագործակցությունն է: Այս դեպքում կրկին առաջանում է խնդիր՝ կապված տեղական ձեռնարկատերերի և օտարերկրյա ներդրողների փոխհարաբերությունների բարոյահոգեբանական կողմի հետ. տեղական ձեռնարկատերը չի կարողանում իր ներդրումն ունենալ, եթե նա համատեղ ներդրումներ նախատեսող նախագծի մեջ չի ներդրել բավարար կապիտալ: Առաջարկությունը վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումների արտահանման հարթակի հայեցակարգի ներդրմանը և այդ նպատակով հարկային համապատասխան արտոնությունների տրամադրմանը՝ հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը: Նկատի ունենալով, որ առանց ներքին խնայողությունների միջոցով ներքին ներդրումների ֆինանսավորման հնարավոր չէ մոտենալ տեխնոլոգիական ընթացիկ սահմանին, այդ ՕՈՒՆ-ի արտահանման հարթակի հայեցակարգ է ներմուծվել ներքին ներդրումների կամ ներքին խնայողությունների տարրը: Հայեցակարգային շրջանակի կարևոր բաղադրիչներն են սահմանային տեխնոլոգիաների փոխանցում ենթադրող ՕՈՒՆ-ի ներգրավման համար հարկային խթանները և այդպիսի նախագծերում տեղական ներդրողների կողմից ՀՀ Կառավարության սուբսիդավորման գումարի առնվազն 30% ներդրումները խրախուսելը:

### Օգտագործված գրականություն

1. ՀՀ Կառավարության 2021–2026 թվականների ծրագիր// <https://www.gov.am/files/docs/4586.pdf>
2. Հայաստանի վիճակագրական տարեգրքեր՝ 2000–2021:
3. Վարդանյան Գ., Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ: Եր., «Գիտություն», 2008:

4. Վարդանյան Դ., Արտահանման հարթակների օտարերկրյա ուղղակի ներդրումների միջազգային փորձը: Եր., «Այլընտրանք» գիտական հանդես, 2019:
5. Распоряжение Евразийского межправительственного совета от 7 марта 2017 г., N 2, О сферах экономики, обладающих интеграционным потенциалом в Евразийском экономическом союзе, и мерах, направленных на его использование.
6. Aghion Ph., Comin D. and Howitt P., When does domestic saving matter for economic growth? Working paper, Department of Economics, Harvard University, 2006, <http://nrs.harvard.edu/urn-3:HUL.InstRepos:27759050>
7. Hausmann R., Hidalgo C., Bustos S., Coscia M., Simoes A., Yildirim M., The Atlas of Economic Complexity. Massachusetts Institute of Technology and Center for International Development, Harvard University, 2013.
8. Development and Globalization: Facts and Figures. UNCTAD. New York and Geneva, 2004.
9. Howitt P., Mayer-Foulkes D., R&D, Implementation, and Stagnation: A Schumpeterian Theory of Convergence Clubs// Journal of Money, Credit and Banking, Vol. 37, No. 1 (Feb., 2005).
10. Hidalgo C., Hausmann R., The building blocks of economic complexity//PNAS, June 30, 2009, vol. 106, no. 26, <https://www.pnas.org/content/pnas/106/26/10570.full.pdf>
11. Commission on Growth and Development. The Growth Report : Strategies for Sustained Growth and Inclusive Development. Washington, DC : World Bank, 2008.
12. Country & Product Complexity Rankings, <https://atlas.cid.harvard.edu/rankings>.
13. Ekholm K., Forslid R., Markusen J., Export-platform foreign direct investment. NBER Working, Paper No. 9517 February, 2003.
14. Mealy P., Farmer, D., Teytelboym A., Interpreting economic complexity//Science Advances, Vol. 5, Issue 1, eaau1705, 4 Jan 2019.
15. Smith A., An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, London, 1776.
16. SITC, 2006: Division 71-Power-generating machinery and equipment; Division 77 – Electrical machinery, apparatus and appliances, n.e.s., and electrical parts thereof (including non-electrical counterparts, n.e.s., of electrical household type equipment.
17. These are the most complex economies around the globe. Technology and Innovation Report 2021. New York, United Nations, 2021.
18. Standard International Trade Classification, Revision 4. United Nations, 2006.
19. <https://www.weforum.org/agenda/2019/12/countries-ranked-by-their-economic-complexity/>
20. UNCTAD. Tax Incentives and Foreign Direct Investment. A Global Survey. New York and Geneva, UN, 2000.
21. World Development Indicators// <https://data.worldbank.org/indicator>
22. <https://oec.world/en/rankings/eci/hs6/hs96>

**ДАВИД ВАРДАНЯН**

Аспирант кафедры финансов АГЭУ

**МГЕР ВАРДАНЯН**

Магистр компьютерных и информационных наук АУА

**Концептуальная рамка финансирования инвестиций, необходимых для повышения уровня экономической сложности, при помощи внутренних сбережений.** – В статье рассматриваются вопросы, связанные с внешними и внутренними источниками финансирования инвестиций для внедрения передовых технологий, с учетом ориентиров по повышению экономической сложности Республики Армения, установленных в программе Правительства Республики Армения на 2021-2026 гг. Степень экономической сложности зависит от ее удаленности от мирового технологического рубежа. Одним из каналов передачи производительных знаний, необходимых для внедрения передовых технологий, являются ПИИ, уровень притока которых недостаточен, а под влиянием COVID-19 и тенденций последнего десятилетия увеличилась неопределенность внешних источников финансирования инвестиций. Основываясь на результатах анализа, авторы пришли к выводу, что стабильный, высокий уровень инвестиций, необходимый для устойчивого экономического роста на основе технологического прогресса, должен обеспечиваться за счет внутренних сбережений. Предложена концептуальная рамка экспортной платформы ПИИ и внутренних инвестиций, нацеленной на повышение уровня экономической сложности страны.

**Ключевые слова:** валовые сбережения, валовые внутренние сбережения, накопление основного капитала, экономическая сложность, передовые технологии, экспортная платформа ПИИ и внутренних инвестиций

JEL: E21, E22

DOI: 10.52174/1829-0280\_2022.1-9

**DAVIT VARDANYAN**

PhD Student of the Chair of Finance of ASUE

**MHER VARDANYAN**

Master of Science in Computer & Information Science AUA

**A Conceptual Framework for Domestic Saving Financing the Investment Required to Increase the Complexity of the Economy.** – The paper reviews the issues related to external and internal sources of investment financing for the introduction of frontier technologies, considering the guidelines for increasing the economic complexity of the Republic of Armenia, established

in the program of the Government of the Republic of Armenia for 2021-2026. The degree of economic complexity depends on its distance from the world technological frontier. One of the channels for the transfer of productive knowledge needed for the adoption of frontier technologies is FDI, which suffers insufficient levels of inflows. In addition, the uncertainty of external sources of financing has increased under the trends of the last decade and recent influence of COVID-19. Based on the results of the analysis, the authors concluded that the stable, high level of investment required for sustainable economic growth based on technological progress must be provided through domestic savings. A conceptual framework for an export platform for FDI and domestic investment is proposed, aimed at increasing the level of economic complexity of the country.

**Keywords:** *gross saving, gross domestic saving, fixed capital formation, resource gap, economic growth, economic complexity, frontier technology, export platform FDI and domestic investment*

JEL: E21, E22

DOI: 10.52174/1829-0280\_2022.1-9